ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏԱՍՆԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ ՆՎԵՐՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌԻՆ

Ի լրացումն «Էջմիածին» ամսագրի 1965 թվականի նոյեմբեր—դեկտեմբեր միացյալ համարի նյութերի, հրապարակում ենք մի շարք կարևոր նվերներ ևս, որոնք սաացվել են Վեհափառ Հայրապետի գահակալության տասնամյակի առթիվ։

Խմբագրությունս շնորհակալությամբ նշում է նախ արժեքավոր նվերները Միլանոյի հայոց գաղութային վարչության նախագահ մեծահարգ տիար Ստեփան Սրապյանի՝ ԺԵ դարի նշանավոր ձեռագիր նկարազարդ լատիներեն Աստվածաշնչի՝ «La Bibbia di Borso D'este»-ի երկու մեծադիր հատորները, լուսատիպ օրինակներով, և իտալական եկեղեցական արվեստի նմուշ ոսկեզօծ մի սկիհ։

Պր. Ստեփան Սրապյանը միաժամանակ հանդիսանում է Մայր Աթոռի բարերարներից մեկը՝ ի պայծառություն Ս. Էջմիածնի կատարած իր կարևոր նվիրատվությամբ, որի համար նա պարգևատրվել է Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի կողմից Ա. Գրիգոր Լուսավորչի առաջին կարգի ոսկյա ադամանդակուռ շքանշանով։

Հաճույքով նշում ենք նաև այստեղ ռումինահայ տաղանդավոր նկարիչ պր. Հրանտ Ավագյանի 8 յուղաներկ նկարների նվերը, Վեհափառ Հայրապետի գահակալության երջանիկ առթիվ Մայր Աթոռ ուղարկված, որոնց մեջ է գտնվում Աստվածամոր մեծադիր նկարը՝ հայկական մանրանկարչության ոճով նկարված։

Նման ուրախ առթիվ նշվում է նաև Ռումինիայի հայոց թեմի ուղարկած նվերը՝ արծաթյա մկրտության գեղեցիկ ավազան, ԺԸ դարից, գործ երբեմնի հայաշատ քաղաք Ռոմանի հայ վարպետների։

Շնորհակալությամբ արձանագրում ենք նաև Վեհափառ Հայրապետի գահակալության տասնամյակի առթիվ Երևանից նկարիչ Արա Բեքարյանի նվերը՝ «Վազգեն Կաթողիկոսի օծման պահը Մայր Տաճարում» (1955 թ.) նկարը, ինչպես նաև Մայր Աթոռի միաբանության և պաշտոնեության նվերը՝ «Սայաթ-Նովա», օնիսկի վրա արծաթ փորագրված, գործ ոսկերիչ վարպետ Հ. Հակոբյանի։

Շնորհակալությո՛ւն բոլոր նվիրատուներին։

«Երանի՜ որ ունիցի յիշատակ ի Ս. Էջմիածին»։

ԼԱՏԻՆԵՐԵՆ ՁԵՌԱԳԻՐ ՆԿԱՐԱԶԱՐԴ ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ
„LA BIBBIA DI BORSO D'ESTE„-Ի ԼՈՒՍԱՏԻՊ ՄԻ ԷՋԸ (ԺԵ ԴԱՐ)

ԼԱՏԻՆԵՐԵՆ ՁԵՌԱԳԻՐ ՆԿԱՐԱԶԱՐԴ ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ՝
'LA BIBBIA DI BORSO D'ESTE,-Ի ԼՈՒՍԱՏԻՊ ՄԻ ԷՋԸ (ԺԵ ԴԱՐ)։

ՈՍԿԵՋՕԾ ՍԿԻՀ

(Իտալական եկեղեցական արվեստի գործ)



ՄԿՐՏՈՒԹՅԱՆ ԱՐԾԱԹՅԱ ԱՎԱԶԱՆ
(Գործ Իսմանի հայ ոսկերիչների, ԺԸ դար)

ՍԱՑԱԹ-ՆՈՎԱ
Օնիսկի վրա արծաթ փորագրված
(Գործ ոսկերիչ Հ. Հակոբյանի)